Աստծո անունով,

Հարգարժան պարոն Ղազարյան, մեծարգո դեսպան պարոն Առաքելյան, հարգելի՛ դասախոսներ, գիտնականներ,

Ուրախ եմ, Իրանի Իսլամական Հանրապետության հաղթանակի քառասունչորսերորդ ամյակի նախօրեին ներկա գտնվել այստեղ, այս գիտաժողովին, որը նվիրված է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 31-ամյակին: Ողջունում եմ, ՀՀ գիտական կառույցներին, հատկապես՝ ԳԱԱ-ի, Օրբելի վերլուծական կենտրոնի, Մատենադարանի և ԵՊՀ իրանագիտության ամբիոնի գործունեությունը, որն ուղղված է մեր երկու երկրների հարաբերություններին առնչվող արդի հիմնախնդիրներն ուշադրության արժանացնելուն և հետազոտելուն: Այս կարևոր գործունեությունը, որի ականատեսն ենք հատկապես վերջին մի քանի ամսվա ընթացքում, մեծ աջակցություն է մեր երկրների հարաբերություններին և հսկայական օժանդակություն՝ մեր երկու երկրների պաշտոնական գործունեությանը: Հույս ունեմ, որ ականատեսը կլինենք, այս գործընթացի շարունակականությանը և արդյունավետությանը:

Քառասունչորս տարի առաջ այս օրերին 20-րդ դարի ամենաժողովրդական հեղափոխություններից մեկի հաղթանակը եղավ՝ Իմամ Խոմեյնիի առաջնորդությամբ: Այս հաղթանակի արդյունքում, Իրանի քաղաքական դաշտից հեռացվեց ավտորիտար և կախյալ միապետական վարչակարգը, և «անկախություն, ազատություն, իսլամական հանրապետություն» կարգախոսներով հիմք դրվեց կրոնական-ժողովրդավարական վարչակարգին: Իրանի Իսլամական Հանրապետությունը, որը հեղափոխության

արդյունքում ծնունդ առավ, արտաքին հարաբերություններում իր մոտեցումները հիմնեց երեք կարևոր սկզբունքների վրա՝ այն է, արժանապատվություն, իմաստություն և նպատակահարմարություն: Այս երեք սկզբունքները, մեր ողջ գործունեությունը կենտրոնացնում և ուղղում են տարածաշրջանային երկկողմ և միջազգային բազմաբնույթ համագործակցությունները ընդլայնելուն, տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը աջակցելուն, արտաքին հարաբերությունները ի նպաստ ազգային շահերին ծառայեցնելուն:

1991 թվականին Հայաստանի Հանրապետության վերանկախացումից հետո, նոր հեռանկարներ բացվեց հայ-իրանական հարաբերությունների համար, և երեսունմեկ տարի առաջ այս օրը՝ երկու երկրների միջև պաշտոնապես հաստատվեցին քաղաքական հարաբերություններ: Թեև վերջին տասնամյակների ընթացքում, տարածաշրջանում և միջազգային գործընթացներում առաջ եկան տարբեր վայրիվերումներ, այնուամենայնիվ երկու երկրների ղեկավարությունները բարձր են գնահատում երկկողմ հարաբերությունները: 2021 թվականի ամռանից իր գործունությունը սկսած Իրանի Իսլամական Հանրապետության նոր կառավարությունը, առավել մեծ ուշադրություն է կենտրոնացնում հարևանների հետ ավելի ջերմ հարաբերություններ ունենալու հարցին:

Վերջին տարիներին տեղի ունեցած տարածաշրջանային և միջազգային գործընթացների զարգացումներում, նոր շունչ է հաղորդվել երկու երկրների հարաբերություններին: Հետևելով տարածաշրջանային զարգացումներին՝ ԻԻՀ և ՀՀ միակարծիք են այնպիսի կարևոր սկզբունքների շուրջ, ինչպիսիք են միջազգային

սահմանները հարգելու անհրաժեշտությունը, խնդիրների խաղաղ կարգավորումը, տարածաշրջանի ժողովուրդների իրավունքներն ու անվտանգությունը հարգելու առաջնահերթությունը և հավաքական ջանքերով կայուն և խաղաղ տարածաշրջան ունենալը: Երկու երկրների տեսակետների ընդհանուրությունը և շահերի համընկնումը, նոր իրավիճակ են ստեղծել երկկողմ հարաբերություններում, որը կարող ենք ներկայացնել երեք ուղղություններով: Նախ այն, որ երկու երկրների ղեկավարների համակարծությունը և քաղաքական խորհրդատվությունների քանակը տարբեր հարցերի շուրջ հասել է աննախադեպ մակարդակի: Երկու երկրների բարձրաստիճան գրեթե բոլոր պաշտոնյանները վերջին մեկ տարում առնվազն մեկ անգամ հանդիպել են իրենց գործընկերների հետ և կողմերի միջև մտքերի փոխանակումը հետագայում շարունակվել է տարբեր ուղղություններով: Այս գործընթացի շարունակությունը միանշանակ անհրաժեշտ է: Երկրորդն այն է, որ 2015 թվականին, երբ Իրանի և Եվրասիական տնտեսական միության միջև արտոնյալ առևտրի համաձայնագրի կնքվեց, դա հիմք դարձավ, որպեսզի մեր երկու երկրների միջև առևտրային հարաբերությունները զգալիորեն ավելանան: Իրան-ԵԱՏՄ նոր համաձայնագիրն ուղի կհարթի, որպեսզի առևտրային հարաբերություններն ավելի խորանան: Երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների ընդլայման ուղղությամբ կարևոր հիմք է նաև լայն համագործակցությունը ենթակառուցվածքների ոլորտում: Էներգետիկ փոխանակումների հարցում երկու երկրների միջև նոր պայմանավորվածություն է ձեռք բերվել պարոն Փաշինյանի Թեհրան կատարած այցի շրջանակներում: Հույս ունենք, որ այս տարի երրորդ էլեկտրահաղորդման գծի նախագիծի ավարտով երկու երկրների միջև

էներգափոխանակման ծավալները կավելանան: 2021 թվականի ամռանը Գորիս-Կապան երթուղու հատվածում առաջացած խնդիրների պատճառով ստեղծված վիճակը, ինչին իհարկե հետևեցին ՀՀ կառավարության գործադրած ջանքերը՝ այլընտրանքային ճանապարներ ապահովելու հարցում, ապացուցեց, որ մեզ անհրաժեշտ են հարմար և անվտանգ ճանապարհներ և հույս ունենք, որ առաջիկա տարիների ընթացքում Իրանի և Հայաստանի միջև տրանսպորտային հաղորդկացության պատկերն էապես կփոխվի: Վստահ ենք, որ Իրանի և Հայաստանի միջև բարձրակարգ և հարմարավետ տրանսպորտային ուղիները արդյունավետ կլինեն միջազգային հարթակներում երկու երկրների դիրքերը բարձր պահելու համար: Իրանով և Հայաստանով անցնող միջազգային տրանսպորտային երթուղու դեմ սպառնալիքը ոչ միայն սպառնալիք կլինի Իրանի և Հայաստանի շահերի դեմ, այլև այդ տրանսպորտային երթուղու մյուս շահառուների համար:

Որպես երրորդ ուղղություն և խնդիր, որը կցանկանամ ընդգծել վերջում, դա այն է, որ հասարակական կարծիքը և էլիտաները պետք է հետևողական լինեն և աջակցեն երկու երկրների հարաբերությունների խթանմանը: Բարեբախտաբար այս ուղղությամբ երկու երկրներում էլ տեսնում ենք և՛ էլիտաների, և՛ հասարակական լայն շրջանակների դրական կարծիքները:

Հաջողություն մաղթելով ձեզ և մեր հարգելի գործընկերներին այս կարևոր նպատակի իրագործման հարցում՝ ընդգծում եմ իմ պատրաստակամությունը, ցուցաբերելու ցանկացած տեսակի աջակցություն երկու երկրների մշակութային, լրատվական, գիտական հարաբերությունները խորացնելու և ամրապնդելու համար:

Եվս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում այս միջոցառումը կազմակերպելու համար:

Աբբաս Բադախշան Զոհուրի
ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան
(2020-2023 թթ.)